

Ավարտվում է ամառային զորակոչը

30.07.2015թ.

Սյունիքի մարզում ավարտվեց ամառային զորակոչը: Հայոց բանակը համալրվեց նոր հերթափոխով: Տարածքային զինկոմիսարիատների կողմից անցկացվող արդեն ավանդույթ դարձած տոնական միջոցառումներին մասնակցել են ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի, տեղական ինքնակառավարման և իրավապահ մարմինների ներկայացուցիչներ, մշակույթի և արվեստի երախտավորներ, Հայրենական մեծ պատերազմի և աշխատանքի վետերաններ: Զինակոչիկներն այցելել են փառքի սրահներ, ծաղկեդրում կատարել մերօրյա հերոսների շիրիմներին:

Մինչ կենտրոնական հավաքակայան հասնելը, զինակոչիկների հայրենասիրական ոգին ավելի բարձրացնելու նպատակով նրանց ծանոթացրել են մայրաքաղաքի պատմամշակութային արժեքներին, մասնավորապես, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, Երևանի պատմության թանգարանի եզակի նմուշներին, այցելել են Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: